

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
վիճակագրության պետական խորհրդի նիստի

17.09.2011թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Աղազարյան, Ս.Դավթյան (խորհրդի անդամներ)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ. Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական), Ա. Անանյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ. Նշանյան (մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Ռ. Շաբոյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ), Վ.Ավետիսյան (Երևան քաղաքի գործակալության պետ):

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական) ու «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերի և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 12-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Ա.Անանյան/

2. «Հայաստանի Հանրապետության 2011թվականի մարդահամարի անցկացման ժամանակ «Վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) տեսակավորման և ստուգման», «Հսկիչ թերթերի (Ձև թիվ 4) տեսակավորման և ստուգման» ցուցումների և «ՀՀ 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման» հրահանգը և «Մուտքագրման փուլի ընթացակարգը» հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Գ.Նշանյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում` Սերբիայի Ջլատիբոր քաղաքում 2011 թվականի հուլիսի 7-ից հուլիսի 8-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի Եվրամիության վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական արտադրանքի ռացիոնալացում» խորագրով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող՝ Վ.Ավետիսյան, Ռ.Շաբոյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական) ու «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերի և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 12-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Ա.Անանյան/

Որոշեցին՝

հաստատել «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2003 թվականի հոկտեմբերի 3-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական) ու «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերի և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 12-ն որոշումը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության 2011թվականի մարդահամարի անցկացման ժամանակ «Վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) տեսակավորման և ստուգման», «Հսկիչ թերթերի (Ձև թիվ 4) տեսակավորման և ստուգման» ցուցումների և «ՀՀ 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման» հրահանգը և «Մուտքագրման փուլի ընթացակարգը» հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Նշանյան/

Որոշեցին՝

«Հայաստանի Հանրապետության 2011թվականի մարդահամարի անցկացման ժամանակ «Վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) տեսակավորման և ստուգման», «Հսկիչ թերթերի (Ձև թիվ 4) տեսակավորման և ստուգման» ցուցումները, ՀՀ 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգը, «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման» հրահանգը և «Մուտքագրման փուլի ընթացակարգը» համաձայն հավելվածների:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Սերբիայի Զլատիբոր քաղաքում 2011 թվականի հուլիսի 7-ից հուլիսի 8-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի Եվրամիության վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական արտադրանքի ռացիոնալացում» խորագրով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ.Ավետիսյան, Ռ.Շարոյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԶԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ԱՂԱԶԱՐՅԱՆ